ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

«Հետաքննող լրագրողներ » հ/կ նախագահ
«Հետք» թերթի գլխ. խմբագիր
Է. Բաղդասարյանին

Հարգելի Է. Բաղդասարյան,

Ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր 10.01.2017թ. թիվ ՀՔ-16-12/10 գրության կապակցությամբ հայտնում ենք, որ «hetq.am» էլեկտրոնային թերթի 28.09.2015թ. «Արմեն Սմբատյանը և Հասմիկ Պողոսյանը յուրացրել են պետական հուշարձանը» վերտառությամբ հրապարակման մեջ նշված հանգամանքները ընդհանրական բնույթ են կրում և դրանում ներկայացված փաստաթղթերը, հոդվածագրի դատողություններն ու եզրահանգումները կատարված կամ նախապատրաստվող հանցագործության հատկանիշներ մատնանշող տվյալների առկայության մասին տեղեկություն չեն պարունակում, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-133/07 և ԵԿԴ/0118/11/13 որոշումների համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթի համար պարտադիր պայման է:

Մասնավորապես, հրապարակման մեջ Ձեր իսկ ներկայացրած փաստաթղթերի (ՀՍՍՌ Մինիստրների Սովետի 24.11.1955թ. №699 կարգադրություն, Երևանի քաղաքապետի 07.05.2001թ. №456 որոշում), ինչպես նաև ինքնուրույն իրավաբանական անձանց՝ հասարակական կազմակերպության և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև գույքային իրավահարաբերությունների մասին տեղեկությունները ինքնին որևէ իրավախախտման մասին տվյալներ չեն պարունակում, հետևաբար դրանց չի կարող տրվել իրավական գնահատական, իսկ հրապարակումն էլ՝ չի կարող դիտարկվել իբրև քրեական հանցագործության մասին հաղորդում:

Միաժամանակ Ձեր կամ այլ անձանց կողմից կոնկրետ հանցագործության մասին վկայող բավարար տվյալներ կամ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու դեպքում դրանց օրենքով սահմանված կարգով ընթացք կտրվի:

Հարգանքով՝
ՀՀ դատախազության հանրային կապերի բաժին